

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հերկայ 1897 տարեշրջանի

Պուշկարիոյ համար տարեկան 10 ֆր

" " 1/2 " 5 "

Արտասահմանի համար " 12 "

" " 1/2 " 6 "

Կանխիկ վճարելի

Համակ դրամ եռայլն խրկել հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Редакция на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք եւ չեն դրկուիր եւ յարմար դատուածներն միայն կը հրատարակուին ամբողջովին կամ մասամբ:

Ծանուցմանց տողը 20 սանթիմ. երեքէն առելի անգամներու համար 20 աւ 100 գեղջ կը լինի:

ԱՄՊԱՏԻԺ ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Երկու անիշխանական գործերը, որոնք վերջերս կատարուեցան Սպա-նիոյ մայրաքաղաքին մէջ, լրջախոհ միտքերու ուշադրութիւնը հրաւիրեցին վիստին անիշխանական նուէրներն եւ իր տարածման վրայ Եւրոպայի մէջ:

Լրջախոհ միտքերու կրօնքը, վասն զի սին միտքեր որոնք կա-րող չեն մարդկային կեանքի երեւոյթներուն խորը թափանցելով գնահատել անոնց կարեւորութեան չափը, անիշխանական ինչպէս եւ ընկերվարական գործերը կը նկատեն պարզապէս իբր ապականած, մոլորած եւ իրենց հաւատարակչու-թիւնը կորսնցուցած ուղեղներու վիժումներ, որոնցմէ ընկերութիւնը ազատ պահելու ուրիշ միջոց չիկայ բայց եթէ ուստիկանական հակոդութիւն եւ պատժական օրէնք-ներու խստութիւն:

Մէկ խօսքով այսպէս խորհող-ները անիշխանութիւնը ըստ ամե-նայնի կը դասեն հասարակ ոճրա-գործութեան, գողութեան եւ մար-դասպանութեան կարգը եւ ամէ-նուն դէմ միեւնոյն միջոցներու գործածութիւնը կը համարեն հար-կաւոր եւ բաւական:

Եւ սխալին, եւ չարաչար:

Այդ կարծիքը ուղիղ պիտի ըլ-լար, եթէ անիշխանական գործե-րու շարժառիթը կարենայինք գըտ-նել զձեռն շահասիրութեան, անձ-նական վրէժխնդրութեան մէջ կամ եթէ անիշխանականներու գոնէ մեծամասնութիւնը մտային խան-գարման որոշ նշաններ ցոյց տար:

Երբ սակայն իրողութիւնները ասոր հակառակը կը հաստատեն, երբ անիշխանականները իրենց դիրքը եւ կեանքը զոհելու յանձ-նառութեամբ կը գործեն իրենց յարձակումները հաստատուած օ-րէնքներու եւ կարգերու դէմ, երբ իրենց յարձակումներով կը կար-ծեն ընկերութեան հարստահար-ուած ու ճնշուած մասին վրէժն առնել չէթէ մասնաւոր անհատ-ներէ, այլ այդման տիրող ընկե-րային դրութեան, ասոր զլխա-

ւոր ներկայացուցիչները ոչնչացնե-լով, երբ վերջապէս կը տեսնենք որ անոնք առհասարակ մտային զարգացման տէր, լեզուազէտ, մասնագէտ մարդիկ են բոլորովին նուիրուած իրենց խոհաշին, վտան-գաւոր անմտութիւն մըն է զիրենք շփոթել սովորական ոճրագործնե-րու հետ:

Այդպիսի վտանգաւոր է անիշ-խանութեան նման կեանքի ծան-րակշիռ երեւոյթ մը թեթեւ աշ-քով դիտել, չըմբռնել թէ իր ար-մատը պէտք է փնտռել մարդկա-յին ընկերութեան կազմակերպու-թեան թեքի կողմերուն մէջ զորս հարկ է բարեփոխել՝ ապագային մէջ ընկերութեան սպառնացող սաստիկ ցնցումներու առաջն առ-նելու համար:

Պատճառը վերցնելու է, որ-պէս զի արդիւնքը վերնայ:

Մենք նպատակ չունինք այստեղ քննելու թէ ինչ պատճառներէ կը ծագի անիշխանութիւնը, խնդիրը ինքնին շահեկանութիւն չունի մեզ հայերու համար, որ բոլորովին տարբեր ցաւերու ու մտատանջու-թեանց մէջ կաշկեղծինք:

Միայն կուզենք մատնանիշ ընել ընկերութեան մէկ վերքը որ ուղ-ղակի յարաբերութիւն ունի մեր ազգային արդի վիճակին հետ եւ որմէ անիշխանութիւնը առատ սնունդ եւ ուժ կը ստանայ:

Այդ վերքն է Եւրոպայի միջազ-գային քաղաքականութեան մէջ տիրող անիշխանութիւնը:

Վերջին երեք տարիները ցոյց տուին թէ անոնք որ աշխարհի զեկը վարելու կոչուած են՝ իրարու հանդէպ իրենց քաղաքականու-թեան մէջ յաճախ դիրք ու գոյն փոխելով, խառնաշփոթութեան մատնեցին այն ուժը զոր Լեւոպա-կան քաղաքականութիւն կանուա-նենք եւ որ կոչուած է ազգերու քա-ղաքական ճակատագիրը որոշելու:

Կը բաւէ միայն յիշեալ այն զա-նազան շրջանները, որոցմէ անցաւ հայկական խնդիրը վերջին տարի-ներ՝ համոզուելու համար թէ իսկապէս անիշխանական կարիք է անուանել այն վիճակը ուր մեծ տէրութիւնները կը գտնուին իրա-

րու հանդէպ, իրենց խոստումնե-րուն եւ ստորագրութիւններու մա-սին, զոր այսօր կուտան՝ վաղը ետ առնելու համար եւ այսպէս ան-հուն չարիք կը պատճառեն ժողո-վուրդներու:

Երբ այսպիսի անպատիժ անիշ-խանութեան մը զայրացուցիչ օ-րինակը այնքան վերէն կուգայ եւ այնքան խղճտներու ծնունդ կու-տայ, պէտք չմնար զարմանալու որ քաղաքակիրթ ազգերու մէջ ժո-ղովրդային անիշխանութիւնն ալ տակաւ տարածուի վրդովիչ համե-մատութեամբ:

Ինչ հեզութիւն: Եւրոպական կառավարութիւնները, որոնք իրա-ւամբ այնքան կը խորշին անիշխա-նութենէ եւ զայն կը պատժեն խստութեամբ, իրենք իրենց օրի-նակով ու գործերով կը սատարեն անոր տարածման:

Եթէ կուզեն անիշխանութիւնը բառնալ, պէտք է որ ամէն բանէ առաջ կարգ կանոն եւ արդարու-թիւն մտցնեն իրենց գործերուն մէջ եւ իրենց քաղաքականութիւնը մաքրեն անիշխանական աղտերէ:

Այն վիճակն ուր բերին հաս-ցուցին Հայկական ու Կրետական խնդիրները՝ պարզօրէն ցոյց կու տայ այն պատճառներէն մին, ուրուն՝ անիշխանութիւնը կը պարտի իր գոյութիւնը եւ տարածումը:

ՄԱՆԻՇԱԿ ԵՒ ՏԱՏԱՍԿ

Սրտին մէջ առնացի վեհանձ-նութեան զգացում կրող մը կը պժգայ անշուշտ՝ յաջողելու բոլոր այն զազիր միջոցներէն որ արեւու լոյսէն կընկրկին, ստուերներու տակ կը պահուըտին, եւ կը գոր-ծեն միայն մութի մէջ, ճիշդ այն վատ մարդասպանին պէս, որ ան-տառին եզերքը կը սպասէ ետեւէն զարնելու համար իր խոյանանը:

Անոնք որ, ինչ ասպարէզի մէջ ալ գտնուին, վտահ են իրենց համատարժանեաց վրայ, աւելի անվրդով կը դիտեն ներկան, որ թէեւ միշտ գունագեղ չըլլար, բայց ընդհանրապէս խոստումնե-րով լի ապագայ մը ընդշնչուի կուտայ իրենց: Բայց նոյն իսկ

եթէ յուսախաբ ըլլան իրենց ա-կընկալութեանց մէջ, ինչ որ կըր-նայ շատ անգամներ պատահիլ, բարոյական ահագին անկում մը կը սեպեն դիմել այնպիսի գու-հիկ եւ ապօրէն միջոցներու, որ զիրենք բուն իսկ իրենց խղճին առջեւ ստորնացնէր:

Աշխարհի մէջ, այն անհատը, որ իրական արժանիք ունի, այ-սինքն՝ բարոյական եւ մտաւորա-կան առաւելութիւններ, այն չըր-ջանակներուն մէջ ուր կ'ապրի, հազուադէպ է որ անշմարելի մը-նայ: Այնպիսի պարագաներ կը ստեղծուին, անճիգ, գրէթէ ինք-նին, որոնք արժանիքի մը գնա-հատումը կը յօրինեն:

Ասոնք այն համեստ մանիշակ-ներն են որոնք անտառին խորը կը բուրեն, մեղմիւ զգացնելով իրենց ներկայութիւնը որուն վրայ ամեն ոք կը զմայլի:

Ինչ տարբերութիւն ասոնց եւ այն տատակներուն միջեւ որոնք ճամբուն եզերքը լրբաբար կը տա-րածուին եւ կը նեղեն, կը կառչին, կը խայթեն: Ասոնք եւս խորհրդ-դանշանն են այն դասակարգին, միջակներու եւ ստորիններու, ուրոնք դիրք մը չինելու կամ զայն պահելու համար, գաղափար մը տարածելու համար, ամեն տեսակ գոհիկ միջոցներու դիմելէ չեն խորշիր, եւ ամեն տեղ իրենց յա-ռաջդիմութեան եւ յաջողութեան երեւակայական ախոյեաններ տես-նելով, ինքնապաշտպանութեան համար, կը սկսին շողացնել իրենց ժանգոտած գէնքերը: — Զարախօ-սութիւն, զրպարտութիւն, դաւ, մատնութիւն իրենց բոլոր երանգ-ներովը:

Այս տգեղ նկարագրերուն կա-րելի է քիչ շատ հանդիպիլ ամեն քաղաքի, զի ամեն արուեստ, ամեն ասպարէզ ունի իրեններուն աւելի կամ նուազ երկարաձիգ թափորը:

Անոնք որ աւելի ունեցած են մօտէն ուսումնասիրելու քաղաքա-կիրթ օտար ազգերը, տեսած են թէ այս թերութիւնները իրենց թեւերը ամեն կողմ տարածած են, թանձրանալով կամ անօրանալով

կրթութեան և միջավայրի պայ-
մաններուն համեմատութիւնով
թուրքերը, իբր քաղաքակրթու-
թեան ճշմարիտ քօնդոր ֆաւօրիտներ,
այս արուեստը հասուցած են իր
ամենէն զարգացեալ վիճակին:

Մեր մէջ եւս, եթէ այս գոե-
հիկ բարքերու ենթակայ եղողնե-
րուն վիճակագիրը պատրաստուէր,
բուական ստուար սոմար մը պիտի
կազմուէր անշուշտ:

Ասոնք մարդկային այնպիսի
տկարութիւններ են որոնք պիտի
տեսնեն մինչեւ որ դաստիարակու-
թիւնը աւելի հաստատուն հիմե-
րու վրայ դրուի, մինչեւ որ դըպ-
րոցը և կեանքը զիրար հերքելէ
դադրին, մինչեւ որ վերջապէս
աշխարհային կարգերն ու կանոն-
ները քիչ մը մաղուին:

Սպասելով այդ ժամանակին,
այժմէն սակայն պէտք է ընդու-
նինք թէ՛ ապօրէն ձգտումները
իրենց տեղը կըլլան միայն այն
խաւերուն մէջ, ուր լոյսի մը
ճառագայթ իսկ չէ թափանցած,
և ոչ թէ ընկերային սանդուխտի
բոլոր աստիճաններուն վրայ ան-
խտի:

Մեր մէջ քանի՛ քանի անգամ
ներ տեսնուած են ու կը տեսնուին
այնպիսի անձեր, որոնք այլապէս
տարբեր և բարձր կոչումներ ու-
նին, ամենէն ազնիւ ասպարէզնե-
րուն մէջ թեւակոխած են, և սա-
կայն խիղճ չեն ընկեր իրենց ժա-
մանակին մէկ կարեւոր մասը ան-
ցընելուն չարախօսելով, դաւելով,
անգիտակցելով միամտութիւնը
չհազարժելով, ուրիշներու հըմ-
տութիւնը, փորձառութիւնը,
արժանիքը տարակուսի տակ ձը-
գելու համար և այս բոլորը ի-
րենց ցած անձերը քիչ մը բարձ-
րացնելու անձնասիրական նպա-
տակով:

ԲՈՆՈՒԹԵԱՆ ԶՈՒՆԵՐ

(ԶԱՆԱԶԱՆ ԱՅՈՒՆԵԱՆ ԶԻՄԱՍԿԱՐԱՆԻՑ)

—X—

Ե.

—1—

Մուսլ ամպերը չըջապատել էին ամ-
բողջ երկնակամարը, երկինքը հսկա-
յական գերեզմանի կապարչի նման
գրկել էր ամբողջ հորիզոնը եւ կար-
ծես մահ էր սպառնում ամբողջ մարդ-
կութեան: Սեւ էր երկինքը, սեւ էր
աշխարհը. սեւ էին մեր երկու հարիւ-
րի չափ մարդկային սրտերը: Սակայն
չօգին կատարում էր իր գերը, մեր
չօգեկառքը կարծես մի առանձին ե-
ռանդով պանում էր դէպի Մոսկովայ:
Վերջապէս մարդկային հանճարի պտու-
ղը—լուսմոտիւը—կարծես իր վերջին
ճիգերը թափելով սկսեց ճկալ, ճկալ,
փռնալ եւ մի քանի վայրկեանից կանգ
առաւ Մոսկովայի կայարաններից մէկի
գիմարէ: Կայարանում խոնաված ամրո-
խի ուղադրութիւնը իսկոյն դարձաւ
դէպի մոսկով ու վանդակապատ վակոն-
ները, ուր չղթայակապ աքսորական-
ները լուռ ու մունջ, թակարդն ըն-
կած կենդանիների նման, դուրս էին
նայում վանդակաւոր պատուհանների

Անտարակոյս ասոնք անվայել
են. և քաղաքակրթութեան ձգտու-
մըն ունեցող ազգ մը պէտք է որ
լանայ մաքրուիլ իր գոեհիկ տար-
րերէն: Եւ սակայն նոյն իսկ եթէ
անուղղայ միան այս տարրերը,
այնքան փաստարար չեն գառնար
եթէ սահմանափակուին ինչ ինչ
չըլանակներու մէջ, ուսկից համա-
ճարակի բնութիւն մը չեն կրնար
ստանալ:

Սակայն խնդիրը կը տարբերի
և սեւ գոյն մը կառնէ եթէ այդ
ախտը մուտք գտնայ այն տար-
րերուն մէջ եւս, որոնք ազգի մը
ճիգերը և գլխաւոր երակները կը
կազմեն:

Այս երակները բազմաթիւ են
այն ազգաց մէջ որ կառավարու-
թիւն մը ունին. բայց հայերս
առ այժմ զրկուած ըլլալով զին-
ւորական, վարչական և վերջա-
պէս աւերութեան մը ահագին մե-
քենան կազմող միւս ճիւղերէն,
մեր ազգին ճիւղերը կազմող գլխա-
ւոր տարրերը սակաւաթիւ են և
կրնան վերածուիլ քանի մը հա-
տի. ինչպէս ուսուցչները, հրա-
պարակագրերը, յեղափոխական-
ները և եկեղեցւոյ պաշտօնեա-
ները:

Գաւեր—Արշալիր

«ՄԵՇՎԵՐԷԹ»

—X—

Ասոնք ատեն հարկ կըլլայ մեր
լրագրական էջերուն մէջ յիշել ա-
նունը այս լրագրին, օսկան երի-
տասարդ թուրքերու, որոնք իս-
կապէս անունով միայն գոյութիւն
ունին, վասն զի թուրք արդի վար-
չութեան դէմ իրենց կանգնած
թումբը բար ըլլալէ աւելի ցան-
ցակերպ թուղթ մըն է: Տեսանք

նեղ ծակերից:

Հանդիսատես բազմութեան մէջ մի
իրարանցում ընկաւ. նրա մի մասը,
մեծ մասամբ փափուկ սեռից, առաջ
անցաւ աւելի մօտիկից տեսնելու տա-
րագիրներին, սակայն աչալուրջ ուս-
տիկանութիւնը իսկոյն նրա առջեւ
կտրեց: Զինուորները դուրս լիափի-
ցին եւ, ամենախիստ կերպարանք
ընդունելով, չըջապատեցին մեր վա-
կոնները: Մի՛ քանի վայրկեանից բաց-
վեցին շարժական բանտի դռները եւ
աքսորականները իրանց չղթանքը
չնդացնելով կամաց կամաց դուրս ե-
կան...

Վագններին մօտեցած կանայք ձեռ-
քերը գրպանները տանելով հանեցին
իրանց քսակները եւ սկսեցին դրամ
բաշխել աքսորականներին:

Ողորմութեան այս ձեւը տարածված
է ամբողջ Ռուսաստանի մէջ. ամեն
գիւղում ու փոքրիկ քաղաքում տասն-
եակներով ծեր ու երիտասարդ կիներ,
բռնուած իւղով, կաթով, հացով եւն.
գիմաւորում են աքսորական խմբերին
և արտասուածքով արշուրձ իրանց
լիքը ձեռքերը մեկնում օրէնքից եւ
հասարակութիւնից դատապարտված եւ
արհամարված աքսորականին: Այդ տե-
սարանը շատ յուզիչ, սրտաշարժ եւ
վեհ է:

Թէ ինչպէս անոնց ամենէն հռչա-
կաւոր պետերէն մէկը, Մուրատ
պէյ, վատ գինուորի մը պէս
դասալիք եղաւ, իր պարզած դը-
րոշը Սուլթանին ոտքին տակ
նետելով:

Մէշվէրէթի վերջին թիւը կար-
ծիք կը յայտնէ հայ յեղափոխու-
թեան արարքներուն մասին, որոնք
վերջերս արտայայտուեցան ումա-
կան բովանդակներով, բնականա-
բար կը դատապարտէ այս «ե-
ղեւնական» ընթացքը հայ յեղա-
փոխիչներուն որոնք իբր թէ ազ-
գը ջնջելու համար կը գործեն եւ
զե՛ր: Ուրիշ անգամ առիթ ու-
նեցանք արդէն ըսելու թէ երի-
տասարդ թուրք ըստածները շատ
աւելի մոլեռանդ օսմանցիներ են
քան այն տգէտ և կոյր կրօնամոլ-
ները որոնք արիւն թափելով մի-
այն կը ցուցնեն իրենց զգացում-
ները: Մէշվէրէթի խմբագիրը
դառնապէս կը դանդաղի ոչ մի-
այն հայերուն ումարձակութենէն,
այլ և անոնց հրատարակութիւն-
ներէն և հրապարակասօտութիւն-
ներէն, «իրենց լրագիրները, կըսէ,
իրենց պրօչուանները, բոլոր իրենց
գրութիւնները գրոշմուած են կը-
րօնական և աղանդական ոգիով:
Մոռնալով իրենց խղճի ազատու-
թեան ինքնակոչ սկզբունքը, կը
գործեն, անզգուշ, իրեւ հաւա-
տաքնական պետեր: Ազգային
գիւրազգայութիւններ խնայելու
և Եւրոպայի քրիստոնէական զգա-
ցումները գգուելու պատրուակով
կը հարուածեն թուրքերուն ար-
ժանապատուութիւնը, որոնց հետ
տարաբախտապէս ստիպուած են
ապրիլ, նոյն իսկ իրենց կարծեց-
եալ հայկական թագաւորութեան
մէջ...»

Այս անտեղի իմաստակութիւն-

ները կարգացողը, որքան ալ
տխմար ըլլայ, իսկոյն կը հաս-
կնայ թէ անոնք գրուած են այն
նպատակով իսկ որուն համար
կ'ամբաստանէինք հայ յեղափոխա-
կանները. այն է թուրքին մոլեռան-
գութիւնը զրգուել: Եւ յետոյ
Մէշվէրէթի բանիմաց խմբագիրը
պէտք էր մինչեւ հիմա գիտցած
ըլլար որ հայ յեղափոխութեան
նպատակակէտը հայկական թա-
գաւորութիւն մը ստեղծել չէ և
չէ եղած երբէք: Կերեւայ թէ
այն գրութիւնները և հրատարա-
կութիւնները, զորս գիտնալ կը
ձեւացնէ և ասոր համար կը դա-
տապարտէ անոնց երեւումը, լիո-
վին անծանօթ մնացած են իրեն,
ապա թէ ոչ պիտի գիտնար որ
մեր յեղափոխականները ատանկ
ցնորական երազ մը սնուցած չեն
երբէք:

Թուրք խմբագրին ըրածը չա-
րամիտ զրպարտութիւն մըն է,
զոր ազդուապէս կը ջրենք:

Այսօր աշխարհը արարատ կը
վկայէ, արիւնալի ապացոյցներու
վրայ հիմնուելով, թէ թուրքը
իր դաւանած կրօնքին ազգեցու-
թեամբ իսկ սահմանաւած է կա-
տաղի մոլեռանդ մը հանդիսանալ
քրիստոնէայ տարրին դէմ: Այս
գաղափարը շատ ծանր կուգայ
օսմանցի խմբագրին, որ կելլայ
մոլեռանդութեան մուրը կը քսէ
հայ յեղափոխականներուն: «Ու-
րիշներուն թերութիւնները քննա-
դատելու համար, ամենաազնիւ
առաքինութիւններ ցոյց տուած
ըլլալ պէտք է» կըսէ Մէշվէրէթ.
բայց, ո և է մարդ առանց շատ
առաքինի ըլլալու, կրնայ դա-
տապարտելի ցուցնել թուրքին
կրօնամոլութիւնը որ արեան լիճի
մէջ կը խեղդէ ամբողջ ժողովուրդ:

մսիս մէջ, որովհետեւ ինձ հետ կապ-
ված աքսորականը լաւ չէր քայլում,
ես ցնցվում էի ամբողջ մարմնով եւ
այնքան ուժգին որ ինձ հետ կապ-
վածը ասում էր՝ հեգնական ժպտոյ
երեսին: «Իսկոք կայ, դեռ չղթային
չը վարժուեցիր, հենց իմացիր թէ ա-
պարանջան է... Թէ չէ հրացանի կո-
թը վզիդ կը հասնի...»

Երկու ժամի չափ քայլելուց յետոյ՝
երեւաց մի վիթխարի եւ բարձր աշ-
տարակներով շինութիւն: Դա կեղծու-
նական բանտն էր. ուստական բան-
տերի սիրտը, որ տեղից առնական
ժողովուրդի արեան ծօրերը հոսում են
ամեն կողմ...:

Հենց որ հասանք բանտը, ես օտա-
կացի, առաջին անգամից էր այդքան
խոշոր եւ անարկու բանտ էի տեսնում:
Շուտով մեր առջեւ բացվեց ուստա-
կան դժոխքի բերանը եւ մեզ երկու
հարիւր հոգուս կուլ տուեց...:

Էլ մայրաքաղաքը գոյութիւն չունէր
մեզ համար. մենք մտանք ուրիշ աշ-
խարհ, մոռացվածների եւ կորած-
ների աշխարհը...

ՎԱՐԴՊ

(Շարունակելի)

Մարդ իսկոյն զգում է թէ պարզ
ժողովուրդը որպիսի բարի եւ բարձր է
քաղաքակրթված դասակարգից: Նա
առանց մանրամասնութիւնների մէջ
մտնելու, առանց որոշելու ոճրագործի
յանցանքի չափը, տալիս է իր օգնու-
թիւնը: Նա միայն տեսնում է որ իր
եղբայրը ընկճված է, լքված է եւ
տարազգիված. տեսնում է եւ իր կա-
րողացած օգնութիւնը հասցնում այդ
ընկճված եղբորը: Եւ գիտնալ, ընթեր-
ցող, որպիսի մեծ եւ ուղիղ ազդեցու-
թիւն է գործում մարդկային բարու-
թեան այդ կենդանի օրինակը նոյն իսկ
ամենասարսափելի ոճրագործի հոգու,
օրտի եւ մտքի վրա:

Ամբողջ սկսեց ցրվել. մեզ դուրս
բերին կայարանից. անձրեւը սկսել
էր. նա թափվում էր առանց շշուկի,
մանր մանր կաթիլներով եւ մեր վըշ-
տահար սրտերը աւելի տխրեցնում...
Մեզ տանում էին կեղծոնական բան-
տը, այն դժոխքը, ուր Ռուսաստանի
ամեն անկիւններից հաւաքվում են Ռու-
սական Աստուծո՛ւ—Ձարի օրէնքի դէմ
մեղանշողները...

Ես գնում էի մեքենայաբար, մըտ-
քով եւ սրտով թռել էի իմ սիրած
վայրերը եւ խօսում էի իմ սրտին մօ-
տիկ անձնաւորութեանց հետ: Միայն
երբեմն չղթայիս երկաթը խրվում էր

մը որուն հետ դարերով կենակցած է :

Չենք ուզեր երկարել թուրք ազատական օւկանին այս հակա-սուլթանները, որոնք շատ տխուր գաղափար մը կազմել կուտան մեզ որ այնքան կը համակրինք իրենց առաջ մղած նուիրական դատին :

ԱՄԳՂԻԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Լա Բարոնի վերջին թիւերէն մէկուն մէջ խմբագրապետ Պ. Լիւսիէն Միլիւլուսի կողմէ սոյն խորագրով գրուած խմբագրականէ մը կը քաղենք հետեւեալ տողերը :

Հայաստան անգլիական հետ-թեան ամենաթշուառ զոհերէն մէկն է . մարդկային տառապանքն ու յուսախաբուծիւնը երբեք այս-քան անամօթաբար չահագործուած չէին՝ կեղծաւոր կարեկցութեամբ, ցուրտ հաշիւներով սիրտ և ալիք չունեցող դիւանագիտութեան մը : Երբեք հարիւր հազար հայեր մեռան, որպէս զի Ֆռնէն Օֆիուր (արտաքին գործոց նախարարութիւն Անգլիոյ) կարենայ տակնու վրայ ընել Արեւելքը : Անկա օգտակար դատեց այս կոտորածները, իր քաղաքականութեան ծաւալման համար փոքր-Ասիոյ մէջ : Նոր պի-գատուող ձեռքերը լուաց արեան գետի մը մէջ :

Անգլիա գիտէր որ ամբողջ ցեղ մը կոտորուելու կը դատապարտէր . գարշելի կերպով խաբեց զայն և անգլիոյէն զոհեց :

Ռուսիա չուզեց պաշտպանել հայոց դատը, որոնք Անգլիոյ պաշտպանեալներն էին : Իսկ այս վերջինը առանց իր սուրը քաշելու հանդիսատես եղաւ Սասունի, Էրզրումի, Վանի և Զէյթունի կոտորածներուն : Բրիտանական դրոշմը ցոյց մը իսկ չըրաւ Պոլսոյ առջեւ :

Նոր դէպք մը քրիստոնեայ ժողովուրդներուն ապացուցուց թէ իսլամին եաթաղանին դէմ Չարին սուրն է տակաւին լաւագոյն պաշտպանը : Քանի մը ամիս առաջ խռովութիւններ ծագեցան Դաւրէթի մէջ, կրօնամոլ պարսիկներ իրենց թուրք կրօնակիցներուն օրինակին հետեւելով յարձակեցան քրիստոնէից թաղին վրայ : Կողոպտուող սկսաւ . կոտորածը մօտաւորապէս բեւէր : Ռուսիոյ հիւպատոսին անմիջական և ազգու միջամտութիւնը մեծ գթբախտութիւններու առաջին առաւ :

Ռուսիոյ կայսրը թէհրանի ռուս գեսպանին հեռագրեց որ անյազաղ պահանջէ 1. Յանցաւորներուն օրինակելի պատժումը . 2. Քրիստոնէից վնասներուն հատուցումը . 3. Խաղաղութեան պահպանման համար պարսիկ կառավարութեան երաշխաւորութիւնը . 4. Պարսկաստանի քրիստոնէից վրայ Ռուսիոյ թեւարկութեան ճանաչումը : Եթէ Պարսկաստան

այս պահանջներուն ընդդիմանար, Արաբսի կողմերէն զրկուած գողակներ յանկարծ երեւան պիտի գային : Պարսկաստան տեղի տուաւ :

Խորհեցէք և բազմաթիւցէք, հայեր, հաշուեցէք թէ Անգլիոյ բարեկամութիւնը որչափ յուսախաբուծիւն և արցունք արժեց ձեզի : Դուք գիտէք այսօր թէ ուսկից կուգայ լքում, մատնութիւն, և ուսկից կրնայ գալ փրկութիւնը :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Ռուսոնու, 2 Սեպտ.

Ազգային գործերն և վարժարանները կանոնաւոր վիճակի մը մէջ գնելու մեծ եռանդ կայ հոս : Արդէն ծանօթ է այն հանգանակութիւնը, որ եղած է երկսեռ վարժարանի մը շինութեան համար . այժմ խորհրդակցութիւններ կը լինին մի յարմար գետին գնելու մասին, որուն վրայ կա-րելի լինի կառուցանել վարժարանը : Յոյս ունինք թէ մինչեւ յառաջիկայ գարուն շինութեան կը ձեռնարկուի, որով միանգամ ընդ միշտ կազատի երկսեռ մանկտրն այն անյարմար վարժարանէն, ուր ապաստանիլ պարտաւորած է առի չգոյէ լաւագունին :

Կանոնաւոր վարժարանի մը նախաձեռնարկը լինելու մտադրու-թեամբ Հոգաբարձութիւնը պաշտօնը կոչած է փարիզէն Նոր Դա-րի թղթակից Պ. Սապահ-Գիւլեան և Պարիզի ուսուցիչ Պ. Մարտիրոս Քէնտիկեան, որոնք մէկ երկու օգնականներով պիտի վարեն վարժարանը, մանկավարժական նորագոյն գրութեանց համաձայն : Պ. Մ. Քէնտիկեան արդէն իր պաշտօնի գլուխը անցած է . իսկ Պ. Սապահ Գիւլեան կը հասնի մի քանի օրէն : Իրենց ցոյց տալիք արդեանց և գործունէութեան մասին մեր ըսելիքները և գիտողութիւնները կը վերապահենք ապագային :

Հոգաբարձութիւնը վերակազմուած է իրենց պաշտօնին յարմար և պատուաւոր անձնաւորու-թիւններէ, որոնք եթէ շարունակեն եռանդուն գործունէութիւնը, զոր ցոյց կուտան իրենց առաջին քայլերուն, ի գուր չպիտի ելլեն այն յոյսերը, զորս կը տածէ ժողովուրդը իրենց նկատմամբ : Վարժարանական վերջին կարգադրութիւնը և ուսուցչական փոփոխութիւնը վարժարանական պիտոճէին վրայ աւելցուցած են 4-5 հազար ֆրանքի գումար մը, որ ի հարկին յանձնառու պիտի լինի թաղական խորհուրդը վճարել . բաւական է որ բարեկարգ վիճակ մը ունենան ազգային վարժարանները :

Ամենայն Հայոց վեհափառ կաթողիկոսը Պուլկարիոյ հոգեւոր հովիւ Գեր. Հ. Արսէն վ. վե-

հունիի տուած տեղեկութեանց համաձայն՝ յոյժ գոհ մնացած լինելով Ռուսոնուի Հայոց կրօնասիրական և ուսումնասիրական զգացումներէն, քաջալերական կոնդակ մը գրած է և իր գոհունակու-թիւնն յայտնած : Կոնդակը կարգացուցեալ Ս. Եկեղեցիին մէջ ի ներկայութեան խռոն բազմութեան : Կոնդակի պարունակու-թիւնը պատիւ կը բերէ Ռուսոնուի Հայութեան :

Գեր. Տ. Արսէն վեհունի, 2-3 ամիսներէ հետե քաղաքս կը գտնուէր և ամէն ջան ի գործ կը դնէր եկեղեցւոյ և վարժարանի պայծառութեան համար . այս շաբթու կը մեկնի Սիւրիստէ, ուր ժամանակ մը մնալէն յետոյ պիտի անցնի Բաղարճը և անկէ վառնա, Պուրկար և այլուր : Հակառակ իր Պուլկարիայէն մեկնելու համար ըրած խնդրանքն-րուն՝ վեհափառ Հայրիկը գրած է իրեն դեռ ժամանակ մը եւս մնալ ի Պուլկարիա և հովուել ժողովուրդը :

Տեղւոյս ընթերցարանը իր նոր և յարմարագոյն շէնքին մէջ կանոնաւորապէս կը շարունակէ և կընդունի ամէն տեսակ թերթեր ու գրուածներ յօգուտ ուսումնասէր անհատից :

Ռուսոնուի հայ երիտասարդութիւնը իրաւամբ կարող է պարծիլ իր ընթերցարանի ճոխութեամբ և կառնաւորութեամբ :

ՀԱՅ ՈՐԲԵՐԸ

Արմազանքի մէջ կը կարդանք թէ Ս. Բեքերպ. վեդ. ռուսա-կան լրագիրը խօսելով հայ որբե-րուն վիճակին վրայ, զոր շատ տխուր գոյններով կը նկարագրէ, կըսէ թէ թուրքիոյ կողոպտուած Հայութիւնը նիւթապէս անկարող է խնամել զանոնք առ հասարակ . իսկ օտար միսիոնարներ ալ, ուրոնք ստանձնած են հաղարաւոր որբերու խնամածութիւնը, մեծ մասամբ հեռու են քրիստոնէա-կան անկեղծ գթասրտութենէ և կրօնավաճառութեան կը վարժեցնեն խեղճ մանուկները :

Ռուս թերթը այս առթիւ կը յիշէ Խրաշուքի մէկ յօդուածն ի մասին հայ որբերու և ասոնց վը-րայ ի գործ գրուած կրօնական բռնութիւններու, ու կեղքակացնէ թէ հայ որբերը միայն Ռուսիոյ մէջ կը գտնեն ապահով ապաստան և կրօնական ազատութիւն :

Արմազանք այս եղբակացու-թեան համաժողովը լայնով հանդերձ կըսէ թէ որովհետեւ կարելիութիւն չիկայ բոլոր հայ որբերը Ռուսաստանի մէջ հաւաքելու և խնամելու, Ռուսիոյ հայ բարեկեցիկ գաւազարդ որբեր որդեգրելու և զանոնք յանձնելու է թուրքիոյ մէջ բացուած որբանոցներուն : Կը մնայ դրամական

այդ նպաստը հաւաքել ռուսահայերէն և զրկել զայն Պոլսոյ ռուս գեսպանատան և հիւպատոսարան-ներուն որոնք՝ ազգային կրօնա-կան իշխանութեանց նշանակած որբանոցներուն բաշխէին որդեգիրներուն յատկացուած այդ գումարները :

Արմազանք կառավարիչ որ այս կարեւոր հանգանակութեան նախաձեռնութիւնը սկսի Բագուէն, որ այսօր կովկասի դրամական կեդրոնն է :

ՊՈՒԼԿԱՐԻԱՏԱ

ԷՄԹԷԱՍԻ ԷՃՆԵՊԻՅԷ

Սօֆիա սթաթիսթիք տայիւրէսինտէն նէշը օլընան ըհամի ճէտ-վէտէ՝ խարիճտէն Պուլկարիայա կէլէն մալլէրին մըգտարը սուրէթի աթիլէտէ կէօսթէրիվիշ տիր :

Կէլէն պէշ սէնէ զարֆընտա խարիճտէն Պուլկարիայա իտիսալ օլընան էմթաննը գըլմէթի մէճ-մուէլէրի :

1892 տէ	77,303,007 ֆրանք
1893 տէ	90,867,900 »
1894 տէ	99,229,193 »
1895 տէ	67,020,295 »
1896 տա	76,580,278 »

Մէմալիքի էճնէպիլէտէն 1896 սէնէսինտէ Պուլկարիայա կիրէն մալլէր :

Աւստրիատան	22,393,989 ֆր.
Ինկիլիթէրատան	18,209,007 »
Թուրքիատան	9,923,618 »
Ալմանիատան	8,589,863 »
Րուսիատան	4,299,775 »
Յիւանսատան	3,358,315 »
Իթալիատան	2,640,688 »
Րումանիատան	2,252,907 »
Պէլճիգատան	2,226,030 »
Սերպիատան	1,043,910 »
Չուիցերիատան	752,793 »
Եունանիսթանտան	355,691 »
Միւսթ. Ալմերիգատան	210,377 »

Պալատէ կէօրիւտիւկի իւզրէ Պուլկարայա էն զիյատէ Աւստրիա մալը կիրմէքտէ իսէտէ սէնէ պէ սէնէ էքսիլմէքտէ տիր . զիրա 1894 սէնէսինտէ իտիսալ օլընան Աւստրիա մալլէրին մէճմուէի 35 միլիոն ֆրանք իքէն՝ 1896 սէնէսինտէ եալընը 22,393,989 ֆրան-գա պալիդ օլմուշ տըր :

Իտիսալ օլընան Ինկիլիդ վէսա-յիր մալլէրին մըգտարը պէօյիւք պիր թէպէտտիւլաթ պուլմամըշ տըր :

Խարիճտէն կէլէն մալլէր 26 նօգթալարտան (կէօմիւք) Պուլկարիայա կիրմէքտէ տիրէր : Սէնէտէ պիր միլիոնտան զիյատէ էճնէպի մալի գապուլ իտէն կէօմ. րիւքէր աթիլտէքի տիր . 1896 սէնէսի

Վառնա	17,301,119 ֆրանք
Սօֆիա	12,115,597 »
Րուսոնու	11,569,176 »
Յիլիպէ	11,920,325 »
Պուրկար	8,310,555 »
Սիլիթօֆ	5,196,106 »
Վիտին	1,779,318 »
Հարմանլը	1,708,896 »
Նիքօրօլ	1,269,279 »
Լօմ	1,220,585 »
Պուրագգամար	կէլէն սէնէ.

Լեյքէ թաթախիգ օլընտըգտա՝ շու պէշ սէնէտէ Պուրկազ Իսխանի...

ԵՌԱՆԱՆ-ԹԻԻՐԲ ՄԵՍԵԼԵՍԻ

Երուսաղիմի թաթախիգ Եօտէյէճէկի թաթախիգ Զարաթիյէյէ մուգա...

Թէսալիատա թիւրք ասքեր լէրինտէ խաթալըգ հիւքիւմքեր...

Պապը Ալի ասքերլէրինի թէսալիատան չըգարմագ իշին հիշ...

Ալթինա մէհափիլի սիասիյէսինտէ սէօյլէտիկինէ կէօրէ, մու...

Երուսաղիմի թաթախիգ մալիյէճէսըգընթըը տէրէճէի ֆէվգէլա...

Երուսաղիմի թաթախիգ իւլլէ տէվլէթլէր միւթթէֆիգէն...

1. Երուսաղիմի վէ թիւրքիա պէյնինտէ մուսալէլի թիւճարիէ...

3. Երուսաղիմի թաթախիգ Զարաթիյէյէ մուգաճիւրլէրին վաթախարընա...

Լարտան միւթէլէքքիլ պիւր գօմօսիօն ինթիսապը:

Սիւպտեմբեր 1 տէ թէճէմմիւ օլընտն էլիլիլ մէճիսինտէ միւ...

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Սուրբ Խաչ Եօրթուր կիւնիւն տէ Ս. Էջմիածինտէ Միւսուրհ...

Շուվա քահանայարընտան Արթ. Տէր Արիստակէս Գովհաննէսեան...

Կաթողիկոսական հովիւ Գիւր. Արսէն վարդապետ պու մինասի...

Բուսնուգ մուսալիլիմիլին պէյնինտա նազարէն, Գիւր. Արսէն...

Արմազանքտա աթիտէքի օգունմուշ տըր:

Ենէնտէն Էրմէնիլէր թիւրքիա տան Բուսիայա հիճրէթ իթմէկէ...

Պաթուստան կազպէկ կազէթա սընա Խազըլտըղընա կէօրէ, օրա...

Երուսաղիմի էսկի պօրճարընա մահապէն հովտեմբեր իպթի...

Գահիրէտէն Թալլիլգա վերիլէն հալատիսէ կէօրէ Ժէնէրալ Հընթը...

Լուսան Վըսըր ասքերլէրի Պէրպէրի զապթ իթմիլէր տիր:

Հինտիատա պիւր թաթախիգ պէտէ վի գապիլէլէր իքի նօգթալար իւ...

ԿԻՐԻՏ

Կիրիտին մէճիսի մէպուսան Էյիսի Ս. Պէնիլէլօ՝ ատաուտան մուֆարէքէթլէ...

Պու մէսէլէր Էյիսին հալլ իթմէք իշին մուսալէհէտէն սօնրա...

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Արթ. Տ. Գէօրգ Ծ. Վ. Նալբանտեան վաղը մասնաւոր պա...

ԶԱՌԻՐԷ ԲԻՍՏԱՍԸ

Վառնա 6 Սեպտեմբեր Ենէն ՄԱՀՍՈՒԼ Պուշտայ Վալօն, լիպրա 47-53, հէթթօլ...

Շուվա, Սիլիստրէի, Տօպրիչի և Աղէքսանտրիա մեր յարգելի գործակաւորներն կը...

Ա. Զ. Դ

Օր. Արմաւենի Սահակեան կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ իր...

ՍԱԲՈՆԻԴ

Ճերմակիւնները առանց սապոնի ոքանչիլ կերպով մաքրելու համար փոշի:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Ապօրինի մեղքի դիմաց ի վառնա Եր վաճառուին զատաբար քաղաք...



ԿՈՒԶԷՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՆԱԼ

Դիմեցէք Փ. Պօլսոյ «Բնեաղ Պօրիս» հրապարակի վրայ Օթէլ Պուլկարիայի...

Երկար փորձերէ վերջը յաջողեցայ պատրաստել սոյն ներկը, որ տարա...

ՅԱՐՈՒԹԻԻՆ ԻՇԻԱՆԵԱՆ

Զանճակատար ի Շումալա կը ծանուցանէ Արգոյ հասարա...

А. Ишханиянъ комисонеръ-экспедиторъ 3-4 Шуменъ.